

Արձանագրություն №3/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. նոյեմբերի 11-ին տեղի ունեցած թիվ 3 առցանց նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 67-ը (վաթսունյոթը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի գիտական կոչման շնորհում (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյան):
2. ԵՊՀ-ում բիզնես ինկուբատոր ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյան):
3. ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի աշխատակարգի հաստատում (զեկ.՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ղազինյան):
4. ԵՊՀ բարեվարքության (էթիկայի) կանոնագրքի հաստատում (զեկ.՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի նախագահ Գ. Ղազինյան):
5. Պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին ԵՊՀ Պատվո շքանշանով պարգևատրելու մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյան):
6. Հաղորդում ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ 2020թ. հարցման արդյունքների մասին (զեկ.՝ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):
7. Հաղորդում 2021-2022 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ բնագիտական և ճշգրիտ մասն. գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան)
8. Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (զեկ.՝ բնագիտական և ճշգրիտ մասն. գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյան):

9. Տեղեկատվություն 2020-2021 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյան):

10. Հաղորդում ԵՊՀ ՈԻԳԸ 2020-2021 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ՈԻԳԸ նախագահ Մ. Փանոսյան):

Ընթացիկ հարցեր:

Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանն առաջարկեց օրակարգի 3-րդ և 4-րդ հարցերը տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ, նախորդ ուստարվա վերջին նիստերից մեկում զեկուցված լինելու պատճառով օրակարգից հանել նաև 6-րդ հարցը, իսկ ընթացիկ հարցերի թվում ներառել «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. բուհական դասագիրք բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար» աշխատանքը հրատարակության երաշխավորելու մասին հարցը: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը հետաքրքրվեց օրակարգից 3-րդ և 4-րդ հարցերը հանելու պատճառի մասին, ինչին ի պատասխան Հ. Հովհաննիսյանը նշեց, որ լրացուցիչ ծանոթանալու և վերջնական քննարկման անհրաժեշտություն կա:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.**- Պրոֆեսորի գիտական կոչման շնորհման մասին: Գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի նախագահ Պ. Վարդևանյանը ներկայացրեց գիտական կոչման հավակնորդին՝ նշելով, որ նա ունի թվով 57 տպագիր աշխատանք, որից 9-ը՝ դոկտորական ատենախոսության պաշտպանությունից հետո, 1 դասագիրք և 1 մեթոդական հոդված, ինչը բավարարում է համապատասխան կարգի պահանջները:

Պրոֆեսորի գիտական կոչման հավակնորդն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Հակոբյան Անուշ Վահանի	Ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակ-ի համար/ դոցենտ

Կազմակերպվեց փակ, գաղտնի առցանց քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 67 անդամներից 65-ը: Գիտական քարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ
1.	Հակոբյան Անուշ Վահանի	64	1

Որոշեցին. - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին.- ԵՊՀ-ում բիզնես ինկուբատոր ստեղծելու վերաբերյալ ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին առաջարկություն ներկայացնելու մասին: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հարցը քննարկվել է ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում, և հիմնական նպատակը տարբեր ֆակուլտետներում ստեղծվող արդյունքների առևտրայնացման միջավայրի, համալսարանական միջավայրում ծնվող գաղափարների գեներացումը և ակսելերացիան է, այդ գաղափարները գիտակրթական, արդյունաբերական, տեխնոլոգիական արդյունքի վերածելուն, ինչպես նաև ինովացիոն գաղափարների հավաքագրմանն ու զարգացմանն օժանդակության ապահովելն է: Ըստ նրա՝ աշխարհի տարբեր համալսարաններ ունենում են իրենց բիզնես ինկուբատորները: Օրինակ՝ Իրանի Յազդի համալսարանի հետ ևս քննարկումներ են եղել և այնտեղ ևս գործող բիզնես ինկուբատորը բավական լավ աշխատում է, Քեմբրիջի համալսարանի բիզնես ինկուբատորը, օրինակ, մեծ գումարներ է գեներացնում համալսարանի համար: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը որպես հավելում նկատեց, որ նման կենտրոնի ստեղծման անհրաժեշտությունն արդիական ու հասունացած է: Թեև Հայաստանում առկա է գործող բիզնես ինկուբատոր, սակայն դա որևէ կերպ չի խանգարում համալսարանին ևս ունենալ նման բիզնես ինկուբատոր, փոխարենը՝ նման կենտրոնների հետ փոխգործակցությունը դրական արդյունքներ կունենա:

Որոշեցին. - Առաջարկել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին՝ ԵՊՀ-ում ստեղծել «Բիզնես ինկուբատոր» կառուցվածքային ստորաբաժանում:

Որոշումն ընդունվեց 61 կողմ, 0 դեմ, 4 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

3.Լսեցին.- Պրոֆեսոր Գուրգեն Մելիքյանին Երևանի պետական համալսարանի Պատվո շքանշանով պարգևատրելու մասին: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը, բարձր գնահատելով պրոֆեսորի մեծ ավանդն ու վաստակը, ներկայացրեց, որ պրոֆեսոր Գ. Մելիքյանի կողմից ստեղծված «Գուրգեն Մելիքյան հիմնադրամ» ահռելի աշխատանք է կատարել Հայաստանում և Արցախում, ինչի շնորհիվ հազարավոր ուսանողներ ուսանելու, կրթաթոշակներ ստանալու հնարավորություն են ունեցել, հրատարակվել են տասնյակ

գրքեր: Նրա խոսքերով՝ ցանկացած համալսարան կարող է պարծենալ նման լեգենդար ներկայացուցիչ ունենալու համար, ուստի վաստակաշատ պրոֆեսորի 85-ամյակի կապակցությամբ ցանկանում են պարգևատրել ԵՊՀ Պատվո շքանշանով:

Որոշեցին. - Հասարակական, բարեգործական և կրթական բնագավառներում մեծ ավանդի համար և ծննդյան 85-ամյա հոբելյանի կապակցությամբ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների թեկնածու Գուրգեն Վրեժի Մելիքյանին պարգևատրել «Երևանի պետական համալսարանի Պատվո շքանշանով»:

Որոշումն ընդունվեց 67 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ:

4.Լսեցին.- Հաղորդում 2021-2022 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: Բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը ներկայացրեց, որ ԵՊՀ ընդունված դիմորդների թիվը կազմել է 2615 (28.7 %-ը)՝ նախորդ տարվա 2687 (29.28%) ցուցանիշի համեմատությամբ: Ցուցանիշը տարիներ շարունակ հիմնականում պահպանվում է փոքր տարբերություններով: 3075 դիմորդներից առկա ուսուցմամբ բակալավրիատ և մագիստրատուրա է ընդունվել 2615-ը: Բակալավրիատի հեռակա ուսուցման համակարգում իրավիճակը կայուն է, իսկ առկա մագիստրատուրայում կա նվազում, ինչի պատճառներից կարող է լինել Covid-19 համավարակային իրավիճակը: Մագիստրատուրայի հեռակա համակարգում վիճակը կայուն է, էական տատանումներ չկան: Ըստ նրա՝ մագիստրատուրայի կրթական ծրագրերի թիվը 113 է, բացված կրթական ծրագրերի թիվը՝ 56, չբացված կրթական ծրագրերինը՝ 27: Ռ. Բարխուդարյանը նշեց, որ այդ ցուցանիշները առկա խնդիրների մասին ենվկայում, այդ հարցում լրացուցիչ քննարկումներ են անհրաժեշտ՝ փաստելով, որ մագիստրատուրայի հետ կապված միգրացիոն խոշորացման անհրաժեշտություն կա: Առկա և հեռակա համակարգերում ընդունվածների ընդհանուր թիվը կազմել է 3868, որից բակալավրիատ (առկա)՝ 2615, բակալավրիատ (հեռակա)՝ 283, մագիստրատուրա (առկա)՝ 825, մագիստրատուրա (հեռակա)՝ 145: Բնագիտական և ճշգրիտ մասնագիտությունների ֆակուլտետներ ընդունվածների թիվը կազմել է 1411 ուսանող, իսկ հումանիտար և հասարակագիտական ֆակուլտետներ ընդունվածներինը՝ 2457: Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վ. Հովհաննիսյանը նշեց, որ բնագիտական թևի ուսանողների քանակն ավելի քիչ է տոկոսային առումով, քան հումանիտար և հասարակագիտական թևինը, և հետաքրքրվեց, թե մագիստրատուրայի չբացված 27 կրթական ծրագրերում ինչպիսի՞ն է հարաբերակցությունը բնագիտական և հումանիտար մասնագիտությունների մասով: Ի պատասխան՝ պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ դժվար է այս պահին միանշանակ պատասխանել, բայց դա կարող է պայմանավորված լինել եկամտահարկից ուսման վարձը վճարելու պետական քաղաքականության հետ, քանի որ այդ քաղաքականությունն առավելապես ուղղված էր բնագիտական մասնագիտություններին: Ռեկտորի ժ/պ Հ.

Հովհաննիսյանը կարծիք հայտնեց, որ բնագիտական մասնագիտությունների գծով բավական ակտիվ քարոզչություն կա, և շուկան բավական ակտիվ է արձագանքում, ինչը կարող է բերել ուսանողների մեծ հետաքրքրության: Նա նաև կարևորեց կրթական ծրագրերի փակման խնդիրները վերհանելու շուրջ քննարկումները և կրթական ծրագրերի վերանայման անհրաժեշտությունը՝ շուկայի, գիտության ու պետության առաջնահերթությունների տեսանկյուններից: ԵՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակում առաջարկվել է ունենալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ռազմավարական պլանավորում և ռազմավարություններ, ինչի շրջանակում շատ հարցերի պատասխաններ կարող են տրվել: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանն առաջարկեց հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին.-2021-2022 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

5.Լսեցին.- Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նշեց, որ յուրաքանչյուր տարի կազմակերպվում են շրջանավարտների հարցումներ, և որոշ ժամանակը մեկ իրականացվում համեմատական վերլուծություն: Հարցմանն ուսանողների մասնակցությունը տոկոսային հարաբերակցությամբ մեծ է եղել մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում, ռուս բանասիրության, արևելագիտության ֆակուլտետներում: Հարցումների արդյունքում օբյեկտիվ պատկեր ստանալու համար նա կարևորեց դրանց ուսանողների ակտիվ մասնակցությունը, ինչը պետք է լինի կամավորության սկզբունքով, քանի որ պարտադրումը որպես կանոն օբյեկտիվ պատկեր չի կարող տալ: Ռ. Բարխուդարյանի ներկայացմամբ՝ միջին գնահատականը բավական բարձր է, ինչպես օրինակ, ՄԿԶԿ-ում՝ 4.88, արևելագիտության ֆակուլտետում՝ 4.84 և այլն, ինչը տարակուսանք է առաջացնում օբյեկտիվ պատկերի տեսանկյունից: Դեկանատի աշխատանքների արդյունքների գնահատման ցուցանիշները ըստ ստորաբաժանումների ևս էական տարբերություններ չունեն և կրկին բարձր են: Առցանց կրթության կազմակերպման աշխատանքների գնահատման ցուցանիշները բարձր են եղել աստվածաբանության, ՄԿԶԿ-ում, ամենացածրը՝ սոցիոլոգիայի ֆակուլտետում, ցուցանիշներն ընդհանուր առմամբ ստաբիլ են, էական թռիչքներ չկան: Քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց գնահատական ստանալու մասին հարցումների ցուցանիշներում նախորդների համեմատ առկա է փոքր նվազում, սակայն թեև փոքր ցուցանիշին, դա չի կարող ընդունելի լինել: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նկատեց, որ ուսանողական հարցումների տրամաբանությունը և մեթոդաբանությունը վերանայման կարիք ունի, և այդ հարցում անելիք ունի սոցիոլոգիայի ֆակուլտետը, քանի որ նպատակը հարցումների օբյեկտիվ պատկեր ստանալն է: Անհրաժեշտ է ունենալ այնպիսի մշակույթ, որը կարտացոլի հարցման օբյեկտիվ պատկերը: Արևելագիտության ֆակուլտետի դեկան Ռ. Մելքոնյանը հետաքրքրվեց հարցումներում բարձր գնահատականի վերաբերյալ

պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանի դժգոհության պատճառների մասին, ինչպես նաև դիտարկում արեց առցանց կրթության մասով էլեկտրոնային հարթակների հետ կապված խնդիրների մասին՝ նշելով, որ այդ հարցում գնահատակները ոչ այնքան ֆակուլտետներին են, որքան ամբողջ համալսարանինը կամ հատկապես ռեկտորատինը: Ի պատասխան՝ ռեկտորի Ժ/պ Ն. Հովհաննիսյանը նշեց, որ խնդիրներ ի հայտ են եկել ոչ թե «E-learning» հարթակի, այլ միայն «Zoom» գործիքի աշխատանքի հետ կապված, քանի որ միանգամից առցանց համակարգին անցումը ֆինանսական վճարումների հարցեր էր առաջացրել: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը նկատեց, որ հարցումներում բարձր գնահատականների հետ կապված դժգոհություն չկա, այլ խնդիրը նրանում է, որ հարցումների մեթոդաբանությունը ճիշտ չէ ընտրված: Օբյեկտիվ պատկեր ստանալու համար մեթոդաբանական և կազմակերպչական վերանայումների անհրաժեշտություն կա: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը հարցումների վերանայման և արժանահավատության բարձրացման հետ կապված ևս իր համաձայնությունը հայտնեց՝ կարևորելով ուսանողների իրավագիտակցության բարձրացման խնդիրը, քանի որ ուսանողները պետք է զիտակցեն, որ իրենց գնահատումները, իրենց խոսքը արժեք և հետևանքներ է ունենալու: Սովորող անդամ Ն. Մարգարյանը ևս համակարծիք էր հարցումների կազմակերպչական ու մեթոդաբանական փոփոխությունների հարցում՝ նկատելով, որ ուսանողների մասնակցության ցածր ցուցանիշը վստահության պակասի մեջ է, քանի որ որոշ դեպքերում հարցման գաղտնիությունը չի պահպանվում: Բացի այդ, հարցումներն իրականացվում են համալսարանական էլեկտրոնային փոստերի միջոցով, սակայն այդ համակարգը վատ է աշխատում, ուստի հետաքրքրվեց, թե ուսանողական էլ. փոստերի աշխատանքի բարելավման ուղղությամբ ինչպիսի՞ աշխատանքներ են իրականացվում: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանն ի պատասխան նշեց, որ եթե նման դեպքեր կան, ապա պետք է անվանական ներկայացվեն: Էլ. փոստերի հետ կապված նշեց, որ կարևոր է սեփական մեծ սերվեր ունենալը և ժամանակակից նոր համակարգերին ինտեգրելու ուղղությամբ քայլեր արվում են: Մոտ ապագայում կլինեն նոր տեխնիկական ու տեխնոլոգիական լուծումներ, որոնք հասանելի կլինեն աշխատակիցներին և ուսանողներին: Ռեկտորի Ժ/պ Ն. Հովհաննիսյանը նշեց, որ հարցումների գաղտնիության հետ կապված խնդիրը կվերցնի իր վերահսկողության տակ և որևէ նման դեպի բացահայտման պարագայում՝ կկիրառվեն ամենախիստ միջոցները: Տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության պետ Պ. Վարդերեսյանը տրված տեխնիկական լուծումների պատճառով բացառեց անձնավորված քվեարկության մասին տվյալների հասանելիությունը, քանի որ ոչ ուսանողները և ոչ էլ դասախոսները չեն կարող իմանալ, թե ով է իրականացրել գնահատումը: Էլ. փոստի աշխատանքի վերաբերյալ նա նշեց, որ ներդրված համակարգը իր խնդիրներով հանդերձ լավագույններից է շուկայում, խնդիրը նրանում է, որ ուսանողները անփույթ են օգտվում դրանից՝ անհետևողականության պատճառով առաջացնելով ինչ-ինչ խնդիրներ: Որպես կանոն՝ ուսանողները չեն հսկում փոստի կիրառման պահանջներին:

Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանն առաջարկեց հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին. - Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2020-2021 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

6.Լսեցին.- Տեղեկատվություն 2020-2021 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին: Մինչ գեկուցողին խոսքը փոխանցելը՝ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ շատ ուսանողների բարձր գնահատականներ ստանալը վկայում է, որ կամ սովորում են հանճարներ, կամ տվյալ դասախոսը ըստ գիտելիքների գնահատելու ջանք չի գործադրում, այլ ուղղակի նվիրում է բարձր գնահատականներ, ինչն էլ խնդիրներ է առաջացնում ռոտացիայի հետ կապված: Նա հորդորեց ֆակուլտետների ղեկաններին և կրթական ստորաբաժանումների ղեկավարներին ուշադիր և հետևողական լինել այդ հարցում և դիտարկում անցկացնել, թե որ դասախոսի մոտ են մշտապես ուսանողները ստանում 20 միավոր: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ անվճար տեղերի թիվը եղել է 1370, սակայն ռոտացիայի արդյունքում անվճար տեղեր զբաղեցրեցին ավելի քիչ, քան նախատեսված էր: Ռոտացիայի արդյունքում անվճար տեղեր զբաղեցրածների թիվը կազմել է 1313, իսկ 26-ն անվճար տեղեր են զբաղեցրել հավասար ՄՈԳ-երի պայմաններում, այսինքն՝ անվճար տեղերը տրվեցին համալսարանի հաշվին: Ըստ Հ. Ժամհարյանի՝ կուրսից կուրս ավելի է կայունանում անվճար տեղեր պահպանողների թիվը, և եթե ցածր կուրսերում ռոտացիա անցնողների թիվը մոտ 30 % է, ապա 4-րդ կուրսում այն էականորեն նվազում է: Նա մտահոգություն հայտնեց որոշ ֆակուլտետներում՝ հատկապես բնագիտական թևի, պետության կողմից ֆինանսավորվող անվճար տեղեր կորցնելու ցուցանիշի կապակցությամբ: Այդ առումով վատ ցուցանիշներ կան ֆիզիկայի, մաթեմատիկայի և մեխանիկայի, ռադիոֆիզիկայի, աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետներում: Հավասար միավորների զգալի մասը բավական բարձր են, ֆակուլտետները անելիք ունեն, որպեսզի խստացնեն գնահատման համակարգը: Անվճար տեղերի համար անցողիկ շեմերը բարձր են եղել որոշ ֆակուլտետներում՝ ֆարմացիայի ինստիտուտում, ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի և այլն, իսկ բավական ցածր՝ մաթեմատիկայի և մեխանիկայի, քիմիայի, ֆիզիկայի և այլ ֆակուլտետներում: Կան ֆակուլտետներ, որտեղ միայն 20 միավոր ՄՈԳ-ով են ուսանողները վաստակել ռոտացիայի արդյունքում անվճար տեղեր՝ հատկապես հումանիտար և հասարակագիտական մասնագիտություններում: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանն, անդրադառնալով բարձր գնահատականներին, նշեց, որ խնդիրը պետք է լուծում ստանա, քանի որ հնարավոր չէ 2 կիսամյակում ուսանողի բոլոր առարկաների գնահատման հանրագումարը լինի 20 միավոր, ուստի այդ հարցում ֆակուլտետներն ու ամբիոնները զգալի անելիքներ ունեն:

Առաջարկվեց հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին. - 2020-2021 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

7.Լսեցին.- ԵՊՀ ՈԻԳԸ 2020-2021 ուստարվա գործունեության մասին: ՈւԳԸ նախագահ Մ. Փանոսյանը ներկայացրեց, որ 2020-2021 ուսումնական տարվա ընթացքում Ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել է 585 միջոցառում, որից 4-ը գիտաժողով, 15-ը համաժողով, 474-ը՝ դասախոսություններ, կլոր-սեղաններ, սեմինարներ և այլն: 2019-2020 ուսումնական տարվա հետ համեմատած, 2020-2021 թթ. միջոցառումների քանակն աճել է 257-ով, ինչը պայմանավորված է առկա ուսուցման համակարգին անցնելով և 3 ստորաբաժանումներում ՈԻԳԸ թիմ ստեղծելով: ՈւԳԸ-ին անդամակցում են շուրջ 485 ուսանողներ, որոնցից 413-ը Բակալավրիատի ուսանողներ են, 55-ը՝ մագիստրատուրայի, 17-ը՝ ասպիրանտներ ու հայցորդներ: ՈւԳԸ անդամներից 396-ը իգական սեռի ներկայացուցիչներ են, 89-ը՝ արական: ՈԻԳԸ աշխատանքներին ներգրավված են (գիտական հոդվածի ղեկավարման, գրախոսության, խորհրդատվության և այլ աշխատանքի ձևով) ԵՊՀ շուրջ 400 դասախոսներ: Տպագրվել են 3 հատորներ, որոնցում ընդգրկված հոդվածներն ընտրվել են գիտական ամենամյա նստաշրջանում հնչած գրեթե 430 զեկուցումներից, և ևս 2 հատոր գտնվում է խմբագրման փուլում, որոնցում ընդ-գրկված հոդվածներն ընտրվել են գիտական ամենամյա նստաշրջանում հնչած գրեթե 260 զեկուցումներից, որոնք մասնագիտական գրախոսման արդյունքում երաշխավորվել են տպագրության: Ֆակուլտետային ՈԻԳԸ-ների՝ 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ընթացքում ստացած և կորցրած միավորների վարկանիշային աղյուսակում գերազանց գնահատական են ստացել Իրավգիտության, Ֆիզիկայի, Պատմության, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետների ՈւԳԸ-ներն ու ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈւԳԸ-ն:

Առաջարկվեց ՈԻԳԸ 2020-2021 ուստարվա գործունեության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին. - ԵՊՀ ՈԻԳԸ 2020-2021 ուստարվա գործունեության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

8.Լսեցին.- «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. բուհական դասագիրք բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար» աշխատանքը հրատարակության երաշխավորելու մասին: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հրատարակչական խորհրդի նիստում դասագիրքը քննարկվել է և առաջարկվել այն որպես համալսարանական դասագիրք հաստատելու համար ներկայացնել ԵՊՀ գիտական խորհրդին: Հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան Ա. Ավագյանն ավելացրեց, որ այդ աշխատանքը արդեն 3 տարի է անցնում է ուսումնական փորձաքննություն և կարելի է հաստատել որպես բուհական դասագիրք:

Որոշեցին.- «Հայոց լեզու և խոսքի մշակույթ. բուհական դասագիրք բնագիտամաթեմատիկական ֆակուլտետների համար» աշխատանքը (հեղ.՝ Յուրի Ավետիսյան, Գոհար Ներսեսյան, Շուշանիկ Գևորգյան, Սուսաննա Գաբրիելյան) որպես դասագիրք երաշխավորել հրատարակության:

9.Լսեցին.- Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի ներդրման աշխատանքների մասին: Հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Է. Ասրիյանը ներկայացրեց, որ մի շարք ֆակուլտետներ (տնտեսագիտության և կառավարման, փիլիսոփայության և հոգեբանության, իրավագիտության ժուռնալիստիկայի, աստվածաբանության, սոցիոլոգիայի) համաձայնել են փորձարկել միջմասնագիտական մագիստրոսական թեզերի ներդրումը: Ըստ նրա՝ մագիստրոսական թեզը կատարվելու է երկու տարբեր ֆակուլտետներում, երկու ուսանողների կողմից, երկու տարբեր գիտական ղեկավարների ներգրավմամբ՝ միջմասնագիտական մեթոդաբանության կիրառմամբ: Թեզն անցնելու է փորձաքննություն համատեղ հանձնաժողովում և ներկայացվելու է նախապաշտպանության և պաշտպանության մասնագիտական հանձնաժողովներում: Է. Ասրիյանը նկատեց, որ պիլոտային ծրագիրը նոր է մեկնարկում, և այլ ֆակուլտետներից ծրագրին միանալու ցանկության պարագայում կարող են հայտ ներկայացնել: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանն ավելացրեց, որ շատ հետաքրքիր կլինի, օրինակ, բնագիտական և հումանիտար մասնագիտություններով միջմասնագիտական աշխատանքների կատարումը, ինչը խթան կհանդիսանա միջգիտակարգային հետազոտությունների ու համագործակցության համար: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ղեկան Հ. Սարգսյանը կարևորեց նման ծրագրի ներդրումը՝ նշելով, որ գիտությունն այսօր միջգիտակարգային ուղղությամբ է զարգանում և հույս հայտնեց, որ հետագայում դա կարող է վերաճել արդեն միջբուհական համագործակցության ու նախագծերի: Պրոռեկտոր Է. Ասրիյանն ավելացրեց, որ այդ ծրագրի շրջանակում հետագայում հաջորդ քայլը լինելու է գործատուի հետ համատեղ աշխատանքների իրականացումը, և այդ շրջանակում հուշագիր է ստորագրվել ԵՊՀ-ի և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև, որը ենթադրում է հենց նմանատիպ միասնական աշխատանքների իրականացում: Պիլոտային ծրագիրը դեռևս առաջին քայլն է, որը հետագայում հետաքրքիր և արդյունավետ է լինելու: Ֆարմացիայի ինստիտուտի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ս. Վարդապետյանը նկատեց, որ ինստիտուտում գործատուների հետ համագործակցությամբ մագիստրոսական աշխատանքների իրականացման պրակտիկա արդեն կա: Գիտական խորհրդի անդամ Ն. Դուրգարյանը հետաքրքրվեց ժամաքանակների բաշխման հետ կապված, ինչին ի պատասխան Է. Ասրիյանը նշեց, որ պիլոտային ծրագրի շրջանակում լրացուցիչ ժամաքաշխման խնդիր դրված չէ, քանի որ յուրաքանչյուր ուսանող իր ղեկավարի մասնակցությամբ է ներգրավված լինելու հետազոտական աշխատանքի

իրականացմանը՝ գիտական ղեկավարի արդեն իսկ ֆիքսված անհատական բեռնվածությամբ:

Սովորող անդամ Ն. Մարգարյանն առաջարկեց ընթացիկ հարցերի թվում քննարկել լավագույն ուսանող մրցույթի հետ կապված հարցերը, մասնավորապես՝ մրցույթի կազմակերպման և համալսարանից բավական ցածր մասնակցության վերաբերյալ, և թե ի՞նչ մեթոդներ են կիրառվել ուսանողների իրազեկման համար: Ի պատասխան՝ պրոռեկտոր Ա. Իսրայելյանը նշեց, որ մրցույթի կազմակերպման ժամանակահատվածը բավական կարճ է եղել և շրջափերականով տեղեկացվել են ֆակուլտետների ղեկանները, ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը՝ ընդգծելով, որ նախորդ տարիների համեմատ մասնակցությունը բավական ցածր է եղել: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանն ի հավելումն նկատեց, որ նախորդ տարվա արդյունքներով հանրապետության մակարդակով շատ բարձր ցուցանիշ է ունեցել ԵՊՀ-ն և բազմաթիվ անվանակարգերում առաջին տեղերը զբաղեցրել են ԵՊՀ ուսանողները: Խնդիրը լավագույնների մասնակցության և ոչ այնքան քանակի մեջ է: Ն. Մարգարյանը, չհամաձայնելով վերջին դիտարկմանը, նշեց, որ այդուհանդերձ իրազեկման խնդիր է եղել, շատերն իմացել են միայն վերջին օրերին:

Առաջարկվեց հաղորդումն ընդունել ի գիտություն:

Որոշեցին. - Միջմասնագիտական մագիստրոսական թեզերի ներդրման աշխատանքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

Նիստի ավարտին ռեկտորի Ժ/պ Հ. Հովհաննիսյանը տեղեկատվություն հաղորդեց ԵՊՀ-ում COVID-19 համավարակով պայմանավորված իրավիճակի վերաբերյալ՝ նշելով, որ այդ պահի դրությամբ համալսարանում պատվաստվածների թիվը 65 % է և նաև դրանով պայմանավորված մահացության ցուցանիշն էականորեն նվազել է նախորդ տարվա համեմատությամբ:

Գիտական խորհրդի նախագահ՝

Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

17.11.2021թ.